ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 116-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 118-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2024 թվականի նոյեմբերի 26-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Ալեքսանդր Սահակյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասն ու իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը ճանաչել հակասող և անվավեր ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ անձին ազատությունից զրկելու «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» պայմանին, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 72-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, այնքանով որքանով որ, ի հակադրումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների և

միջազգային առաջադեմ չափորոշիչների, ի թիվս այլնի, 2022 թվականի հուլիսի 1-ից հետո՝ 2024 թվականի մարտի 15-ի դրությամբ, ծանր վիրավորանքի հոդվածով դեռևս շարունակվում է հաստատվել հանցանքի կատարման հիմնավոր կասկածը և որպես խափանման միջոց կիրառվում կալանավորումն այն դեպքում, երբ նշված հանցանքը 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով ապաքրեականացվել է:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ից 2-րդ մասերը, 116-րդ հոդվածի 1-ից 3-րդ մասերը, 118-րդ հոդվածի 4-րդ մասն ու իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը ճանաչել հակասող և անվավեր ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 5-րդ մասերով նախատեսված ազատության իրավունքի երաշխիքներին, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, ՀՀ Սահմանադրության 80-րդ և 81-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, այնքանով որքանով որ, ի հակադրումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ այդ թվում ընդդեմ Հայաստանի կայացված վճիռների, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է կարծրատիպային և վերացական դատողություններով, առանց անհատականացված ձևով հիմնավոր կասկածի առկայության ստուգման, առանց կալանավորման հիմքում դրվող տվյալների օբյեկտիվության վերլուծման, առանց անձը բնութագրող տվյալների գնահատման»:

2. Ներկայացնելով համապատասխան գործի դատավարական նախապատմությունը և անդրադառնալով վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասին՝ Դիմողը նշում է, որ վերոգրյալ գործով ՀՀ դատարաններն ուղղակիորեն անտեսել են այն հանգամանքը, որ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով ծանր վիրավորանքն ապաքրեականացվել է և այլևս հանցագործություն չի համարվում, ուստի՝ 2024 թվականի մարտի 15-ի դրությամբ տվյալ հանցանքի կատարման հիմնավոր կասկած հաստատվել չէր կարող: Արդյունքում՝ Դիմողի պնդմամբ՝ ՀՀ դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասը և

իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունն առ այն, որ իր նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում դրվել է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով ապաքրեականացված հանցանքի՝ ծանր վիրավորանքի կատարման հիմնավոր կասկածի հաստատումը, հանգեցրել է իր՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատության իրավունքի խախտման: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ տվյալ դեպքում խախտվել են նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 72-րդ հոդվածով երաշխավորված՝ համապատասխանաբար արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը, ինչպես նաև Սահմանադրության 80-րդ հոդվածով ամրագրված՝ ազատության իրավունքի անխախտելիությունը և 81-րդ հոդվածի ուժով՝ ազատության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավակիրառ պրակտիկան, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռներով:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասը և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը չեն համապատասխանում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ անձնական ազատությունից զրկելու *«հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի»* պայմանին, Սահմանադրության 61, 72, 80 և 81-րդ հոդվածներով սահմանված պահանջներին այնքանով, որքանով, ի հակադրումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների և միջազգային առաջադեմ չափորոշիչների, 2022 թվականի հուլիսի 1-ից հետո՝ 2024 թվականի մարտի 15-ի դրությամբ, ի թիվս այլնի, ծանր վիրավորանքի հոդվածով դեռևս շարունակվում է հաստատվել հանցանքի կատարման հիմնավոր կասկածը և որպես խափանման միջոց կիրառվում կալանավորումն այն դեպքում, երբ նշված հանցանքը 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով ապաքրեականացվել է:

Անդրադառնալով վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասին՝ Դիմողը գտնում է, որ, ելնելով անձի ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունից, բոլոր այն դեպքերում, երբ անձին մեղսագրվում է ենթադրյալ մի քանի հանցանքների կատարում, ՀՀ դատարանները պետք է անհատական (առանձին) քննարկման առարկա դարձնեն հանցանքներից յուրաքանչյուրը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության փաստը՝ հիմնավորելով, թե կոնկրետ ո՞ր նյութերով է հաստատվել մեղսագրվող արարքներից յուրաքանչյուրի կատարման հիմնավոր կասկածը: Հակառակ պարագայում, ըստ Դիմողի, սահմանափակվում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության հիմնական իրավունքը, առարկայազրկվում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված՝ ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը, քանի որ անհասկանալի է դառնում, թե կոնկրետ ո՞ր նյութերով է հիմնավորվել կոնկրետ հանցանքի կատարման հիմնավոր կասկածը, և անձը հնարավորություն չի ունենում պաշտպանվելու իրեն ընդհանրական դատողություններով մեղսագրվող արարքների «ընդհանուր զամբյուղից»:

Դիմողը պնդում է, որ այն մոտեցումը, երբ ՀՀ դատարանները խուսափում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում քննարկման առարկա դարձնել իր կողմից սույն անհատական դիմումի շրջանակներում մատնանշված հանգամանքները, խաթարում է Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական ազատության հիմնական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը և Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատությունից զրկելու կապակցությամբ արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու անձի հիմնարար իրավունքը, հակասում դրանք անվերապահորեն հաշվի առնելու անհրաժեշտության մասին մշտապես ընդգծող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը,

ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասը և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը չեն համապատասխանում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 5-րդ մասերով սահմանված ազատության իրավունքի երաշխիքներին, Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, ինչպես նաև Սահմանադրության 80-րդ և 81-րդ հոդվածների պահանջներին այնքանով, որքանով, ի հակադրումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռների, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է կարծրատիպային և վերացական դատողություններով՝ առանց անհատականացված ձևով հիմնավոր կասկածի առկայության ստուգման, կալանավորման հիմքում դրվող տվյալների օբյեկտիվության վերլուծման և անձը բնութագրող տվյալների գնահատման:

Միաժամանակ Դիմողն իր անհատական դիմումին կից ներկայացրել է գործի քննության հրապարակայնությունը սահմանափակելու վերաբերյալ միջնորդություն:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.**

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե* ***դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրա-***

վական ակտի դրույթի սահմանադրականությունը, *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(...) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով հարկ է փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և (կամ) դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության գնահատումը:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնք **ենթակա չեն Սահմանադրական դատարանի քննությանը**: Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում

դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես, Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) սույն գործով դատարաններն ուղղակիորեն անտեսել են այն հանգամանքը, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով ծանր վիրավորանքն ապաքրեականացվել է և այլևս հանցագործություն չի համարվում, և ըստ այդմ՝ այդ հոդվածով հանցանքի կատարման հիմնավոր կասկած հաստատվել չէր կարող 2024 թվականի մարտի 15-ի դրությամբ»:*

Դիմողը նաև նշել է. *«(...) Ալեքսանդր Սահակյանի առնչությունն իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցանքների կատարմանը հիմնավորելիս դատարանները չեն ներկայացրել անհատականացված հիմնավորումներ ըստ հանցանքներից յուրաքանչյուրի՝ հնարավորություն ընձեռելով Ալեքսանդր Սահակյանին արդյունավետ իրականացնել իր՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված՝ ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքը: Տվյալ դեպքում, դատարանների կողմից չի ներկայացվել, թե կոնկրետ մեղսագրվող հանցանքների կատարման հիմնավոր կասկածը հաստատելիս կոնկրետ ի՞նչ փաստական տվյալներ են ներկայացվել»:*

Սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողը ներկայացրել է նաև պնդում առ այն, որ *«(...) սույն գործով դատարանները որևէ գնահատման չեն ենթարկել ներկայացված տվյալների հավաստիությունը, դրանց որակական հատկանիշները, քանակական համակցությունը՝ Ալեքսանդր Սահակյանին մեղսագրվող արարքներով հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելիս»:*

Դիմողը նաև պնդել է. *«(...) սույն գործով դատարանների որոշումները, ի հակադրումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, նույնիսկ մեկ նախադասությամբ որևէ գնահատման չեն ենթարկել Ալեքսանդր Սահակյանի անձը բնութագրող հատկանիշները, չի ներկայացվել որևէ պատճառաբանություն»:*

Վերոշարադրյալի հաշվառմամբ նկատի ունենալով Դիմողի կողմից ներկայացված մյուս դիրքորոշումները ևս՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինս **իր անհամաձայնությունն է հայտնում համապատասխան գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակությանը:** Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **համապատասխան գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով Դիմողի բարձրացրած հարցերի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ համապատասխան գործի շրջանակներում ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Բավարարել Դիմողի՝ գործի քննության հրապարակայնությունը սահմանափակելու վերաբերյալ միջնորդությունը և դիմումի ընդունելիության հարցը քննարկել դռնփակ աշխատակարգային նիստում:

2. «Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 116-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև 118-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-194